ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ -տպագրության և առաքման-- ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԳՎԲԿ-ԳՀԾՁԲ-21/5-7»*

Ք. Գավառ_ «_23_» _02_ 2021 թ.

<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ն ի դեմս Ա. Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Սամնան>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Հայրապետյանի ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրության և առաքման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

Сканировано с CamScanner

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Сканировано с CamScanner

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[23]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[24]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

Сканировано с CamScanner

պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է __5__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ	<<Սամնան >> ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21	ք. Երևան Նազարբեկյան 3/1
/0264/ 2-33-53	<Հայէկոնոմբանկ> ԲԲԸ Մետաքս մ/ճ
««Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ	ՀՀ 163218023543
Գեղարքունիք մ/ճ	ՀՎՀՀ01272957
h/h 220085140329000	Տնօրեն Մ. Հայրապետյան
ՀՎՀՀ 08417304	
Տնօրեն՝ Ա. Կարապետյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Сканировано с CamScanner

Հավելված N 1
« 23 » 02 20 թ. կնքված
«ԳՎԲԿ-ԳՀԾՁԲ-21/5-7» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Իրավիրված նախատեսված չափաբաժնի համարը	Ծառայության (CPV)	Անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն	մատուցման ժամկետը**
1	79821170/501	R գրաֆիա ողնաշար	A4 ձևաչափի միակողմանի**	հատ	1170	300	Գավառի ԲՊՄԿ թ. Գավառ Ազատության 21 հասցեով. աշխատանքային օրվա ընթացքում ժամը 9.00 մինչև 15.00 ընկած ժամանակահատվածում:	Ծառայությունը կմատուցվի այդ նպատակով համապատասխան ֆիզիկական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո
2	79821170/502	R գրաֆիա կրծքավանդակ	A4 ձևաչափի միակողմանի**	հատ	1170	300		
3	79821170/503	R գրաֆիա սկոպիա	A4 ձևաչափի միակողմանի**	հատ	1560	400		
4	79821170/504	R գրաֆիա սկոպիա	A4 ձևաչափի միակողմանի**	հատ	1170	300		
5	79821170/505	R գրաֆիա սկոպիա	A4 ձևաչափի միակողմանի**	հատ	450	100		
6	79821170/506	MPП բլանկ	A4 ձևաչափի միակողմ	հատ	2340	600		
7	79821170/507	ազատ գրաֆա	A3 ձևաչափի երկկողմանի**	հատ	1500	100		
8	79821170/508	ամբուլատոր պացիենտների հաշվառման մատյան ձև 2	A4 ձևաչափի երկկողմանի** 200 թերթ հաստ որակյալ կազմով	հատ	4950	3		
9	79821170/509	ամփոփ N1	A4 ձևաչափի միակողմանի	հատ	1560	400		
10	79821170/510	ամփոփ N2	A4 ձևաչափի միակողմանի	հատ	1170	300		
11	79821170/511	ամփոփ տեղեկանք	A4 ձևաչափի միակողմանի	հատ	900	200		
16	79821170/516	արյան բլանկ շաքարի որոշման	A7 ձևաչափի միակողմանի	հատ	3200	2000		
18	79821170/518	գույքագրման թերթիկ	A3 ձևաչափի երկկողմանի	հատ	2250	150		
22	79821170/522	դեղատան հաշվետվության ձև	A4 ձևաչափի միակողմանի	հատ	800	200		
23	79821170/523	դեղատան հաշվետվություն	A3 ձևաչափի միակողմանի**	հատ	3000	200		
25	79821170/594	դեռահաս աղջիկների հետազոտման քարտ	A4 ձևաչափի միակողմանի	հատ	450	100		
26	79821170/526	դրամարկղի մուտքի օրդեր	A5 ձևաչափի միակողմանի**	հատ	150	50		
27	79821170/527	եկամուտների և բուժված դեպքերի հաշվառում	A4 ձևաչափի միակողմանի	հատ	800	200		
28	79821170/528	Էլ. սրտագրական հետազոտ. թիվ---	A4 ձևաչափի երկկողմանի**	հատ	1950	500		
29	79821170/529	Էլեկտրասրտագիր	A4 ձևաչափի միակողմանի	հատ	1950	500		
30	79821170/530	Էպիկրիզի բլանկ /թերապևտիկ/	A4 ձևաչափի երկկողմանի**	հատ	1000	250		
31	79821170/531	իրազեկման թերթիկ	A4 ձևաչափի երկկողմանի**	հատ	800	200		
33	79821170/533	ծննդաբերության պատմագրի ներդիր կեսարյան հատման դեպքում	A3 ձևաչափի երկկողմանի** 2 թերթ	հատ	5990	200		
34	79821170/534	ծննդաբերության պատմագիր ներառյալ ներդիր	A3 ձևաչափի երկկողմանի** 5 թերթ	հատ	65000	1000		
36	79821170/536	հաշիվ ֆակտուրա	A5 երկկողմանի**	հատ	250	50		

Сканировано с CamScanner

41	79821170/542	հիվանդի տեղափոխման թերթիկ N____	A4 ձևաչափի միակողմանի**	հատ	1200	300		
42	79821170/543	հղիի և ծննդկանի անհատական քարտ	A3 ձևաչափի 3 թերթ	հատ	40500	900		
43	79821170/544	հղիի հուշաթերթիկ	A5 ձևաչափի միակողմանի**	հատ	1200	300		
45	79821170/546	հղիի հսկողության օրագիր	A4 ձևաչափի երկկողմանի**	հատ	800	200		
46	79821170/547	հղիության ընդհատման բժշկական քարտ հավելված 2	A3 ձևաչափի երկկողմանի** 2 թերթ	հատ	1500	100		
50	79821170/551	մեմորիալ օրդեր	A5 ձևաչափի երկկողմանի**	հատ	250	50		
53	79821170/555	նորածնային սկրինինգի հանձնման թերթիկ	A4 ձևաչափի միակողմանի**	հատ	1600	400		
55	79821170/557	նորածնի վարման թերթիկ-ներդիր	A4 ձևաչափի միակողմ	հատ	2340	600		
56	79821170/558	նորածնի դուրս գրման տեղեկացման թերթիկ	A4 ձևաչափի միակողմ	հատ	1200	300		
57	79821170/559	նորածնի վարման քարտ ներառյալ ներդիրները	A3 ձևաչափի 2 թերթ երկկողմանի	հատ	9000	300		
58	79821170/560	շտապ բժշկական օգնության ուղեգիր N	A4 ձևաչափի միակողմանի**	հատ	1200	300		
61	79821170/563	շրջանառության գիրք քանակ-գումար	Շրջանառության գիրք (քանակ - գումար), A 4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրության սպիտակությունը ոչ պակաս քան 90%, խտությունը 80գ/ք.մ., ստվարաթղթե կազմով 800 գ/ք.մ, 114 թերթից, որից 18-ը կազմված է ապրանքների շրջանառության ցուցակից, իսկ 96 -ը կազմված է նյութական հաշվառման ցուցակից, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով:	հատ	5100	3		
62	79821170/564	շրջանառության գիրք դբետ-կրեդիտ	Շրջանառության գիրք /դեբետ- կրեդիտ/, A4 ձևաչափի, օֆսեթային թղթից,, երկկողմանի տպագրությամբ սպիտակությունը ոչ պակաս քան 90% խտությունը 80գ/ք.մ. Ստվարաթղթե կազմով 800գ/ք.մ. 114 թղթից, որից 18 կազմված է ապրանքների շրջանառության ցուցակից , իսկ 96-ը կազմված է նյութական հաշվառման ցուցակից, մետաղակար, սոսնձված , կողքի մասի լիդերի նապատումով:	հատ	3400	2		
66	79821170/569	ուղեգիր	A4 ձևաչափի միակողմ անի յուրաքանչյուր էջի վրա 6 օրինակ	հատ	1850	500		
67	79821170/570	ուղեգիր	A4 ձևաչափի միակողմ անի յուրաքանչյուր էջի վրա 4 օրինակ	հատ	250	50		

Сканировано с CamScanner

69	79821170/571	ուղեգիր հավելված 5	A4 ձևաչափի միակողմանի**	հատ	250	50		
70	79821170/573	ուղեգիր N2	A4 ձևաչափի միակողմ	հատ	800	200		
71	79821170/574	ուղեգիր N3	A4 ձևաչափի միակողմ	հատ	2340	600		
72	79821170/575	պահանջագիր թիվ_____	A5 ձևաչափի միակողմանի**	հատ	850	500		
73	79821170/576	պահանջագիրք/ղ եղորայքի, պատճենահանվող/	պատճենահանվող (3 օրինակից) որակյալ A 4 200 թերթ** հաստ, որակյալ կազմով: /Հաշվի առնելով պատճենահանվող թերթերը ընդհանուր թերթերի քանակը 600 թերթ/:	հատ	110000	20		
82	79821170/585	տաբելի գիրք	հաստ , կաշվե որակյալ կազմով 300 թերթ երկկողմանի A4ձևաչափի **	հատ	6300	3		
84	79821170/587	տեղեկանք	A5 ձևաչափի միակողմանի**	հատ	200	100		
85	79821170/589	տեղեկանք սոց փաթեթի	A4 ձևաչափի միակողմանի**	հատ	400	100		
86	79821170/590	փոխանակման քարտ	A4 ձևաչափի երկկողմանի**	հատ	2590	700		
88	79821170/592	քսուկի քնության բլանկ	A6 ձևաչափի միակողմանի	հատ	780	600		
89	79821170/593	օրագիր	A3 ձևաչափի երկկողմանի	հատ	2250	150		

**Թուղթը պետք է լինի սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ,նախատեսված գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար, միատակ և երկտակ թերթերի համար, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/մ2: ԳՕՍՏ 6656-76, ISO-9001 և ISO-14001 ստանդարտներին համաձայն ստանդարտի:Փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով
մատյանները և գրքերը լինեն մետաղակար, սոսնձված , կողքի մասի լիդերի նապատումով:

Ծառայությունը առաքվում է /մատուցվում/ <<Գավառի բժշկական կենտրոն>> ՓԲԸ ք. Գավառ Ազատության 21 հասցեով, աշխատանքային օրվա ընթացքում ժամը 9:00 մինչև 15:00 ընկած ժամանակահատվածում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21
/0264/ 2-33-53
««Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Գեղարքունիք մ/ճ
h/h 220085140329000
ՀՎՀՀ 08417304
Տնօրեն՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Սամնան >> ՍՊԸ
ք. Երևան Նազարբեկյան 3/1
<Հայէկոնոմբանկ> ԲԲԸ Մետաքս մ/ճ
ՀՀ 163218023543
ՀՎՀՀ01272957
Տնօրեն Մ. Հայրապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

Сканировано с CamScanner

Հավելված N 2
20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21
/0264/ 2-33-53
**Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Գեղարքունիք մ/ճ
հ/հ 220085140329000
ՀՎՀՀ 08417304
Տնօրեն՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Սամնան >> ՍՊԸ
ք. Երևան Նազարբեկյան 3/1
<Հայէկոնոմբանկ> ԲԲԸ Մետաքս մ/ճ
<< 163218023543
ՀՎՀՀ01272957
Տնօրեն Մ. Հայրապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

Сканировано с CamScanner